

ԱՇԽԱՏԵՐԼ ԵՍ ԴՈՒ...

(Ազա Նեգրից)

Յափշտակուած դու ինձանով, կրքոտ սիրով տողորուած,
Զերմ համբոյրներ, գրկախառնումն սպասում ես փո-
խադարձ.

Փափակում ես գուրգուրուելու, տիրանալու իմ սրտին,
Կարօտում ես թարմ, կուսական մատաղ սիրոյ թովչանքին:

Բայց ասա՛ ինձ՝ ծանօթ ես դու վշտերի հետ դարաւոր,
Մաքառել ես հերոսի պէս վիճակիդ դէմ բռնաւոր,
Եւ որպէս մի վախկոտ ստրուկ չե՞ս վհատել նեղ ժամին,
Զե՞ս խուսափել հաս վտանգից, որ զոհ չը տաս դու
կեանքին:

Անդուլ գործից առաջացած ցոյց տուր ձեռքիդ
կոշտերը,
Ես կ'իմանամ՝ սիրում ես դու արդեօք ազնիւ աշխատանք.
Ասա գոնէ, տանջուել ես դու մինչև սրտիդ խորքերը
Զարքաչ, թշուառ մարդկանց համար—եւ ի՞նչ է քո
նպատակ:

Դու լռում ես... հեռու ուրեմն մաքուր սիրուց կանացի,
Աշխարհային վայելքներիդ գնա՛ կրկին նորոգիր.
Սիրիւ ընկած ժպիւրհ կանանց առանց խղճի խայթոցի,
Գծուծ ոսկին ինձ տիրանալ անկարող է, իմացիր:

Օ՛, եթէ ես երբ և իցէ քո ձեռքերը տեսնէի
 Քերուած, հիւծուած արիւնլուայ—այդ վիճակից ինք-
 նագոհ,
 Թէ ինձանից, որպէս պարգև, փոխարէն լուռ տան-
 ջանքի
 Պահանջէիր սէր, փայփայանք, պահանջէիր անգամ զոհ,

Թէ տեսնէի, որ հեգնանքով դու ատում ես ժանգ
 ոսկին
 Սուրբ վաստակով ոգևորուած վերադառնում այլ կեանքի,
 Տեսնէի քեզ՝ վերածնուած կամենում ես մաքառել
 Վիճակիդ դէմ և նոր կեանքի արշալոյսը ողջունել,

Այն ժամանակ ես քեզանով հպարտացած բաջարի
 Քո զրկանքով, տառապանքով իմ կոյս կուրծքը կ'այրէի.
 Կը ջանայի թեթեալներ վիշտ ու հոգսըդ վիթխարի
 Եւ հոգեմաշ դարդիդ համար քեզ իմ կեանքը կը տայի:

Բայց դու մեղսոտ կեանքի զաւակ—հաճոյքների սի-
 րահար
 Ձեռն աշխատել... ապրում ես զուր—կեանքը օտար քեզ
 համար.
 Դու այնպէս էլ փայփայուած ես, բախտախնդիր ստահակ,
 Կորիւր անարգ... քեզ պատասխան ունեմ միայն՝ իմ
 զգուանք...

Թարգմ. ՅԱԿՈԲ ՅԱԿՈԲԵԱՆ